ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ II ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով, հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ ԿՏՄ) գործունեության 2022 թվականի տարեկան ծրագիրը, ի կատարումն «Կրթության տեսչական մարմին հանրությունից ստացվող բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու մասին» կարգի 11-րդ և 14-րդ կետերի պահանջների, ՌԳՍՊՎԳ վարչության կողմից իրականացվել է 2022 թվականի 2-րդ կիսամյակում ստացված դիմում-բողոքներում բարձրացված հարցերի, բերված փաստարկների նկատմամբ իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքների վերլուծություն (այսուհետ՝ վերլուծություն):

Վերլուծությունն իրականացվել է համաձայն հետևյալ բնութագրիչների՝

1. քանակական պատկեր՝ ըստ ամիսների, վերահսկողության ոլորտների, սկզբնական հասցեագրման աղբյուրների,
2. քանակական պատկեր՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, ուսումնական հաստատությունների, իրականացված վարչական վարույթների տևողության, դիմումատուների սեռերի,
3. իրականացված վերահսկողական գործառույթների (ստուգում, ուսումնասիրություն և վարչական վարույթ) արդյունքների,
4. բարձրացված հարցերի բովանդակության:

Տրվել է նաև նշված բնութագրիչների քանակական չափանիշների աճի կամ նվազման միտումը (համեմատական պատկեր՝ ըստ 2021 թվականի համապատասխան և նախորդ հաշվետու ժամանակահատվածների):

2022 թվականի 2-րդ կիսամյակում ԿՏՄ-ում ստացվել է 44 դիմում-բողոք, որից 3-ը վերաբերել են ՀՀ նախադպրոցական, 35-ը՝ հանրակրթական, 3-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեությանը, իսկ 3-ը եղել են այլ բնույթի:

2021 թվականի 2-րդ կիսամյակի համեմատությամբ դիմում-բողոքների թիվն աճել է 57%-ով (2021 թվականի 2-րդ կիսամյակում ստացվել է՝ 28 դիմում-բողոք), իսկ նախորդ կիսամյակի համեմատությամբ՝ աճել է 132%-ով (2022 թվականի 1-ին կիսամյակ՝ 19 դիմում-բողոք):

2021 և 2022 թվականների 2-րդ կիսամյակների ընթացքում ստացված դիմում-բողոքների թիվն, ըստ ամիսների, ներկայացված է Գծապատկեր 1-ում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԹԻՎՆ՝ ԸՍՏ II ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՄԻՍՆԵՐԻ



2021 թվականի նույն ժամանակահատվածում ԿՏՄ-ում ստացված 28 դիմում-բողոքներից 22-ը վերաբերել են ՀՀ հանրակրթական, 5-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեությանը, իսկ 1-ը եղել է այլ բնույթի: Իսկ 2022 թվականի 1-ին կիսամյակում ԿՏՄ-ում ստացված 19 դիմում-բողոքներից 14-ը վերաբերել են ՀՀ հանրակրթական, 4-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեությանը, իսկ 1-ը եղել է այլ բնույթի: Ըստ գծապատկեր 1-ի տվյալների՝ թե՛ 2021, թե՛ 2022 թվականի II կիսամյակում դիմումների առավելագույն թիվը գրանցվել է սեպտեմբեր ամսին (ուսումնական տարվա սկիզբ):

Ինչպես նախորդ հաշվետու ժամանակահատվածում (73,7%) և նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածում (78,6%), այս կիսամյակում ևս դիմումների գերակշռող մասը (79,5%) վերաբերել է դպրոցներին, ինչը պայմանավորված է նաև միջնակարգ կրթության ոլորտի շահառուների մեծ թվով (Գծապատկեր 2):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆ՝ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



Նշված 44 դիմում-բողոքներից 2-ը ԿՏՄ վերահասցեագրվել են ՀՀ վարչապետի աշխատակազմից, 18-ը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից (այսուհետ՝ ԿԳՄՄՆ), 1-ը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից, իսկ 23-ը ստացվել են ԿՏՄ-ում (Գծապատկեր 3):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԹԻՎՆ՝ ԸՍՏ ՀԱՍՑԵԱԳՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԻ



Վերը նշված 44 դիմում-բողոքներից 20-ը (45%) ԿՏՄ է հասցեագրվել e-request.am կայքի միջոցով:

2022 թվականի 2-րդ կիսամյակում ԿԳՄՄՆ–ից հասցեագրված դիմում-բողոքների տոկոսային թիվը կազմել է 43%: Նախորդ հաշվետու և նախորդ տարվա նույն ժամանակահատվածների համեմատությամբ՝ ԿԳՄՄՆ-ից ստացված դիմում-բողոքների թիվը աճել է համապատասխանաբար 13-ով՝ 260% և 12-ով՝ 200%:

2022 թվականի 2-րդ կիսամյակում ստացված 44 դիմում–բողոքներից 15-ը (34.1%) ստացվել է Երևանից, 10-ը (22,7%)՝ Արմավիրի, 9-ը (20,5%)՝ Շիրակի, 5-ը (11,4%)՝ Կոտայքի, 2-ական (4,5%)՝ Արարատի և Գեղարքունիքի, իսկ 1-ը (2,3%)՝ Լոռու մարզերից:

Հաշվետու ժամանակահատվածում ստացված դիմում-բողոքների քանակական պատկերն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ներկայացված է Գծապատկեր 4-ում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԹԻՎՆ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ



Դիմում-բողոքների տոկոսային համամասնությունն, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, ունի հետևյալ տեսքը (Գծապատկեր 5):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ



Դիմում-բողոքների թիվն, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ուսումնական հաստատությունների, ներկայացված է ստորև բերված աղյուսակում (Աղյուսակ 1).

Աղյուսակ 1.

ՀՀ մարզեր, Երևան քաղաք	*Դիմումների ընդհանուր թիվը (ներառյալ «Թեժ գիծը»)*	*Դիմումների թիվն՝ ըստ ուսումնական հաստատությունների*
Երևան	*15*	*Երևանի հ. 161 հ/դ, Երևանի հ. 52 հ/դ , Երևանի թիվ 51 հ/դ, Երևանի թիվ 21 հ/դ, Երևանի հ. 168 հ/դ, ԱրտՍՏԵՄ վարժարան, Երևանի 149 մանկապարտեզ, «Առողջ ապագայի տեսլական», Երևանի հ. 184 ա/դ , Երևանի հ.186 հ/դ, Երևանի թիվ 130 հ/դ (2), Երևանի թիվ 53 հ/դ, այլ բնույթի (2)*
Արմավիր	*10*	*Արմավիրի հ. 5 հ/դ (5), Ակնալիճի մանկապարտեզ, Նորապատի մ/դ, Վաղարշապատի թիվ 9 հ/դ, Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ (2)*
Շիրակ	*9*	*Ախուրյանի հ. 1 հ/դ (8), Գյումրու հ. 32 հ/դ*
Կոտայք	*5*	*Աբովյանի հ. 7 հ/դ (2), «Արեգնազան» կրթահամալիր, Չարենցավանի հ. 3 հ/դ, այլ բնույթի (1)*
Գեղարքունիք	*2*	*Վաղաշենի մ/դ, Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ*
Արարատ	*2*	*Արարատի հ. 2 մ/դ (2)*
Լոռի	*1*	*Ստեփանավանի թիվ 5 մանկապարտեզ*
Ընդամենը	*44*	

2022 թվականի 2-րդ կիսամյակում և նախորդ երկու հաշվետու ժամանակահատվածներում ստացված դիմում-բողոքների քանակական պատկերն, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, ներկայացված է Գծապատկեր 6-ում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 6. ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԹԻՎՆ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ



Վերջին երեք կիսամյակների ընթացքում ստացված դիմում-բողոքների քանակով առաջին եռյակում են գտնվում Երևան քաղաքը (27 դիմում-բողոք), ՀՀ Շիրակի մարզը (15 դիմում-բողոք) և ՀՀ Կոտայքի մարզը (12 դիմում-բողոք):

2022 թվականի 2-րդ կիսամյակում ստացված 26 ուսումնական հաստատությունների գործունեությանը վերաբերող դիմում-բողոքները, ըստ լիազոր մարմնի ենթակայության, բաշխված են հետևյալ կերպ (Աղյուսակ 2).

Աղյուսակ 2.

Դիմում-բողոքների թիվն ըստ լիազոր մարմնի և ուսումնական հաստատությունների		
ԿԳՄՍՆ	*4*	*Երևանի հ. 184 ա/դ, Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ (2), Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ*
Երևանի քաղաքապետարան	*10*	*Երևանի հ. 161 հ/դ, Երևանի թիվ 51 հ/դ, Երևանի թիվ 21 հ/դ, Երևանի հ. 52 հ/դ , Երևանի հ. 168 հ/դ, Երևանի 149*

		մանկապարտեզ, Երևանի հ.186 հ/դ, Երևանի թիվ 130 հ/դ (2), Երևանի թիվ 53 հ/դ
ՀՀ Արմավիրի մարզպետարան	***7***	***Արմավիրի հ. 5 հ/դ (5), Նորապատի մ/դ, Վաղարշապատի թիվ 9 հ/դ***
ՀՀ Արմավիրի համայնքապետարան	***1***	***Ակնալիճի մանկապարտեզ***
ՀՀ Կոտայքի մարզպետարան	***3***	***Աբովյանի հ. 7 հ/դ (2), Չարենցավանի հ. 3 հ/դ***
ՀՀ Շիրակի մարզպետարան	***9***	***Ախուրյանի հ. 1 հ/դ(8), Գյումրու հ. 32 հ/դ***
ՀՀ Լոռու համայքապետարան	***1***	***Ստեփանավանի թիվ 5 մանկապարտեզ***
ՀՀ Արարատի մարզպետարան	***2***	***Արարատի հ. 2 մ/դ (2)***
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	***1***	***Վաղաշենի մ/դ***
Ոչ պետական ուսումնական հաստատություն	***3***	***ԱրտՍՏԵՄ վարժարան ՍՊԸ, «Առողջ ապագայի տեսլական», «Արեգնազան» կրթահամալիր***

Հարկ է նշել, որ 2022 թվականի 2-րդ կիսամյակի 26 ուսումնական հաստատությունների վերաբերյալ ստացված 41 դիմումներից 10-ը (24,4%) վերաբերել են Երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատություններին:

Նախորդ կիսամյակում համապատասխան ցուցանիշը կազմել է 15,8% (19 դիմումներից 3-ը):

Իրականացված վարչական վարույթների միջին տևողությունը կազմել է 22 օր:

Այս ցուցանիշը նախորդ կիսամյակում կազմել է 10, իսկ 2021 թվականի 2-րդ կիսամյակում՝ 13 օր:

2022 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում ստացած 44 դիմումներից 31-ը (70,5%) ներկայացված է եղել կանանց (նախորդ կիսամյակում կազմել է 68,4%), 7-ը (15,9%) տղամարդկանց (նախորդ կիսամյակում կազմել է 21,2%), 5-ը (11,4%)՝ մի խումբ քաղաքացիների կողմից (նախորդ կիսամյակում կազմել է 5,2%) և 1-ը (2,3%)՝ անանուն է եղել:

Ըստ ստացված դիմում-բողոքների՝ վերահսկողական գործառույթներ են իրականացվել 26 ուսումնական հաստատություններից 9-ում (34,6%), որոնցից 5 -ում (***Արմավիրի թիվ 5 (2), Աբովյանի թիվ 7, Ախուրյանի թիվ 1 հիմնական, Վաղաշենի միջնակարգ, Երևանի թիվ 184 ավագ դպրոցներ***) իրականացվել է 6 վարչական վարույթ, իսկ 4–ում ***(«Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսա-***

իրավագիտական համալսարան» ՍՊԸ ԱրտՍՏԵՄ վարժարան, Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ, Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ, Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց)՝ ստուգում:

Դիմում–բողոքներից 13–ը (29,5%) վերահասցեագրվել է (մասամբ վերահասցեագրված՝ 4 և ամբողջությամբ՝ 9) դիմումում բարձրացված հարցերը (մի մասը) ԿՏՄ լիազորությունների շրջանակից դուրս լինելու պատճառով, 13–ը (29,5%)՝ կարճվել են:

Այլ պետական մարմիններին վերահասցեագրված 13 դիմում-բողոքներից 5-ը (38,5%) (***Արմավիրի թիվ 5, Վաղարշապատի թիվ 9 հիմնական դպրոցներ (2), Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ, Նորապատի միջնակարգ դպրոց***) վերահասցեագրվել է ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն, 4-ը (30,8%) (***Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց (3), 1 այլ բնույթի***)՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

Վերահասցեագրված դիմում–բողոքների թիվն, ըստ համապատասխան մարմինների, ներկայացված է Գծապատկեր 7-ում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 7. ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԹԻՎՆ՝ ԸՍՏ ՎԵՐԱՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ



2021 թվականի 2-րդ կիսամյակում, ըստ ստացված 28 դիմում-բողոքների, վերահսկողական գործառույթներ իրականացվել են 9-ի (32%) դեպքում (7 վարչական վարույթ և 2 ստուգում):

Նախորդ կիսամյակում, ըստ ստացված դիմում-բողոքների, վերահսկողական գործառույթներ են իրականացվել 5 (26%) ուսումնական հասատություններում՝ 1 վարչական վարույթ, 4 ստուգում:

Ինչպես նկատում ենք՝ վերահսկողական գործընթացների անհրաժեշտություն պահանջող դիմում-բողոքների տոկոսային թիվն աճել է նախորդ 2 հաշվետու կիսամյակների համեմատությամբ:

2022 թվականի 2-րդ կիսամյակում 5 ուսումնական հաստատություններում իրականացված 6 վարչական վարույթներից միայն 4-ի արդյունքում են հայտնաբերվել կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջի խախտումներ (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3.

N	*Ուսումնական հաստատությունը*	*Հայտնաբերված խախտման բնույթը*	*Ձեռնարկված միջոցառումները*
1.	ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 7 հիմնական դպրոց	Հոգեբանի և սոցիալական մանկավարժի պաշտոնների պարտականությունների կատարման պահանջների խախտում:	Վարչական վարույթի արդյունքներն ուղարկվել է ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ Կոտայքի մարզպետին, ՀՀ վարչապետի աշխատակազմ և դպրոցի տնօրենին: Տրվել է հանձնարարական խախտումները վերացնելու նպատակով:
2.	ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց	1. Ծնողական խորհրդի նախագահի ընտրության սահմանված կարգի խախտում: 2. Դասղեկի պաշտոնային պարտականությունների կատարման պահանջի խախտում:	Վարչական վարույթի արդյունքներն ուղարկվել է դպրոցի տնօրենին: Տրվել է հանձնարարական խախտումները վերացնելու նպատակով:
3.	Երևանի թիվ 184 ավագ դպրոց	Դպրոցի կառավարման խորհրդի կազմում ընդգրկված մանկավարժական և ծնողական խորհուրդների ներկայացուցիչների ընտրության ընթացակարգի խախտում:	Վարչական վարույթի արդյունքները ուղարկվել են ԿԳՄՍ նախարարին:

4.	ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշենի միջնակարգ դպրոց	«Անգլերեն» առարկայի ուսուցչի թափուր տեղի մրցույթն անցկացվել է ընթացակարգային խախտումներով:	Վարչական վարույթի արդյունքներն ուղարկվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարին, ՀՀ Գեղարքունիքի մարզպետին և դպրոցի տնօրենին: Մրցույթի արդյունքները, ըստ տնօրենի գրավոր պարզաբանման, չեղյալ են ճանաչվել, և հայտարարվել է նոր մրցույթ: Մարզպետի կողմից տնօրենի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ:

Իրականացված 4 ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 2 ուսումնական հաստատություններում ***(Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջ, Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ)*** (Աղյուսակ 4):

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ ստուգումների արդյունքում կազմված ակտերի, կարգադրագրերի մեկական օրինակներ ուղարկվել են համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին:

Աղյուսակ 4.

N	***Ուսումնական հաստատությունը***	***Հայտնաբերված խախտման բնույթը***	***Ձեռնարկված միջոցառումները***
1.	ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ	1) Տնօրենը չի ղեկավարել հաստատության մանկավարժական խորհուրդը: 2) Տնօրենի կողմից 2022 թվականին չեն հաստատվել գործող մասնագիտությունների ուսումնական պլանները՝ համաձայն պետական կրթական չափորոշչի, առարկայական և (կամ) մոդուլային ծրագրերը: 3) Տնօրենը ուսումնական պլաններով չի սահմանել հաստատության ուսանողների 2022-2023 ուսումնական տարվա ուսումնառության արդյունքների ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ ստուգման ձևերը և պարբերականությունը: 4) Տնօրենը չի ներկայացրել խորհրդի հաստատմանն 2022 թվականին ընդունված ուսանողների ուսանողական նպաստներ և պետական կրթաթոշակներ ստացող ուսանողների անվանական կազմը: 5) Քոլեջում առկա չէ տնօրենի կողմից հաստատված 2022-2023 ուսումնական	Ստուգման արդյունքում կազմվել է ակտ, որի մեկ օրինակ ուղարկվել է ԿԳՄՍ նախարարին: Համաձայն ՀՀ ԿՏՄ ղեկավարին փոխարինողի 25.10.2022թ.-ի No Ք-75 կարգադրագրի քոլեջի տնօրենին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Հանձնարարականների կատարման վերաբերյալ տեղեկացման ժամկետ է սահմանվել 2022 թվականի նոյեմբերի 30-ը: Հանձնարարականների կատարման վերաբերյալ քոլեջի տնօրենից գրություն չի ստացվել:

		տարվա 1-ին կիսամյակի դասացուցակը և ժամանակացույցը: 6) Քոլեջում՝ 2022 թվականին ընդունված ուսանողների անձնական գործերում առկա չեն դիմումները: 7) Քոլեջում ընդունելությունը իրականացվել է մրցութային հիմունքների խախտումով: 8) 2022 թվականին անվճար և վճարովի ուսուցման տեղերում մրցույթի արդյունքների հրապարակումը, ինչպես նաև դիմորդների հրամանագրումը որպես ուսանող իրականացվել են սահմանված ժամկետների խախտումներով: 9) Քոլեջում չի պահպանվել 2022 թվականին չընդունված 4 դիմորդների (մրցույթից դուրս մնացած) պահանջված փաստաթղթերի պատճենները: 10) Քոլեջում 2022 թվականին մրցույթով անցած յուրաքանչյուր դիմորդի համար չեն կազմվել անձնական գործեր՝ հրամանագրված դիմորդների հետ սահմանված կարգով չեն կնքվել պայմանագրեր: 11) 2022 թվականին ընդունված ուսանողներին չի հանձնվել պայմանագրի երկրորդ օրինակը, ուսանողական տոմս և առաջադիմության գրքույկ: 12) Քոլեջի տնօրենի կողմից 2022 թվականի ընդունող հանձնաժողովի աշխատանքային պլանը չի հաստատվել:		
2.	ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ	Մանկավարժի թափուր հաստիք առաջանալու պատճառով դասաժամերը տրամադրվել են ոչ մասնագետների (5 խախտում):	Ստուգման արդյունքում կազմվել է ակտ:Համաձայն ՀՀ ԿՏՄ ղեկավարին փոխարինողի 22.07.2022թ.-ի No Ք-49 կարգադրագրի՝ քոլեջի տնօրենին տրվել հանձնարարական՝ մասնագիտական առարկաների և մոդուլների դասավանդումը համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների միջոցով ապահովելու վերաբերյալ: Հանձնարարականների կատարման վերաբերյալ տեղեկացման ժամկետ է սահմանվել 2022 թվականի սեպտեմբերի 9-ը: Հանձնարարականները կատարվել են:	

Դիմում-բողոքներում բարձրացված հարցերի բովանդակությունն, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, ներկայացված է Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5.

Դիմումներում բարձրացված (նշված) հարցերը	ԵՐԵՎԱՆ	ԱՐԱՐԱՏ	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	ՇԻՐԱԿ	ԿՈՏԱՅՔ	ԱՐՄԱՎԻՐ	ԼՈՌԻ	Ընդամենը
Գործատու–աշխատող հարաբերություններ						1		1
Սովորողների ուսումնական հաստատության ընդունելություն	4					1		5
Կրթական գործընթացի կազմակերպում	1							1
Ավարտական քննությունների կազմակերպում	2							2
Տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններ, անարդյունավետ աշխատանք	4	2	1	2	1	2		12
Ուսուցչի թափուր պաշտոնի համար կայացած մրցույթ			1		1			2
Սովորողի անձնական գործի կեղծում		1						1
Ուսումնական հաստատության շենքային պայմաններ					1			1
Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննությունների կազմակերպում	1							1
Ուսուցչի վարքագիծ	2					2		4
Տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացում				1				1
Դրամահավաքություն							1	1
Ուսուցիչների իրավունքների ոտնահարում						1		1
Դպրոցում տիրող անառողջ միջավայր	1							1
Տնօրենի նշանակման սահմանված ընթացակարգ				2				2
Երեխայի նկատմամբ հոգեբանական ճնշման գործադրում	3							3
Ուսուցիչ-սովորող փոխհարաբերություններ	1							1
Տնօրենի հավաստագրի ստացման մերժում						1		1

էլեկտրոնային տարիֆիկացիայում տվյալների կեղծում						**1**		**1**
Դպրոցի կառավարման խորհրդի և անդամների գործունեություն				**2**				**2**
Դպրոցի մանկավարժական խորհրդի և անդամների ընտրություն և գործունեություն	**1**							**1**
Դպրոցի ծնողական խորհրդի և անդամների գործունեություն	**1**							**1**
Ընդամենը	**21**	**3**	**2**	**7**	**3**	**9**	**1**	**46**

Առավել շատ բարձրացված հարցերը վերաբերում են տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններին և անարդյունավետ աշխատանքին:

Այս հարցին առավել շատ անդրադարձ է արվել ոչ միայն 2022 թվականի 2-րդ կիսամյակում (դիմում–բողոքներից 12-ում՝ (27%)), այլև նախորդ 2 հաշվետու ժամանակահատվածներում (2022 թվականի 1-ին կիսամյակում՝ 19 դիմում-բողոքներից 12-ում (63%), և 2021 թվականի 2-րդ կիսամյակում՝ 28 դիմում-բողոքներից 13-ում (46%):

Ըստ դիմումների թվի՝ երկրորդ տեղում ուսումնական հաստատությունում սովորողների ընդունելության սահմանված կարգին վերաբերող հարցն է:

Այս հարցին անդրադարձ է կատարվել 5 (11,4%) դիմում-բողոքներում:

Նախորդ 2 հաշվետու ժամանակահատվածներում այս հարցին անդրադարձ չի կատարվել:

Երրորդ տեղում է ուսուցչի վարքագծին վերաբերող հարցը:

Այս հարցին անդրադարձ է կատարվել 4 (9,1%) դիմում-բողոքներում:

Նախորդ 2 հաշվետու ժամանակահատվածում տվյալ հարցին անդրադարձ չի եղել:

Հավաքագրված այլ տվյալներ ներկայացված են ստորև բերված Աղյուսակ 6-ում.

Աղյուսակ 6.

Այլ տվյալներ՝	***Թիվը***
Դիմողը չի հայտնաբերվել	***3***
Դիմողին ուղարկվել է պատասխան գրություն	***38***
Դիմողը հրաժարվել է իր դիմումից	***4***
Դիմումը ներկայացվել է առանց ստորագրության, նշված չէ դիմողի անունը, ազգանունը, հեռախոսահամարը	***1***

Դիմումում բարձրացված հարցերը դուրս են ԿՏՄ լիազորությունների շրջանակներից	***9***
Դիմումում բարձրացված հարցերը մասամբ դուրս են ԿՏՄ լիազորությունների շրջանակներից	***4***
Կարճված դիմումներ	***13***

Դիմումի վերահասցեագրում	
ՀՀ Կոտայքի մարզպետարան	***1***
ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչություն	***1***
ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչություն	***1***
ՀՀ քաղաքաշինություն, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	***1***
ԿԳՄՄՆ	***4***
ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն	***5***

Այսպիսով՝

1. դիմում-բողոքների թիվը աճել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ 57%-ով, նախորդ կիսամյակի համեմատությամբ՝ 132%-ով,

2. վերահսկողության ոլորտներից խնդրահարույց է, ինչպես միշտ, միջնակարգ կրթության ոլորտը, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է նաև շահառուների մեծ թվով,

3. միջին մասնագիտական կրթության ոլորտի 3 դիմում–բողոքները ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ են, որոնցից 2-ը վերաբերել են՝ ***Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջի*** և 1-ը՝ ***Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջի*** գործունեությանը,

3. սկզբնական հասցեագրման աղբյուրը հաշվետու կիսամյակում 52% դեպքերում՝ ԿՏՄ-ն է: Այս ցուցանիշը նախորդ կիսամյակում կազմել է 53%, իսկ նախորդ տարվա նույն հաշվետու ժամանակահատվածում՝ 71%, ինչպես նաև դիմում–բողոքների 45%-ը ԿՏՄ է հասցեագրվել e-request.am կայքի միջոցով,

4. ստացված դիմում-բողոքների քանակով վերջին 3 կիսամյակներում Երևան քաղաքը, ՀՀ Շիրակի և Արմավիրի մարզերը առաջին եռյակում են,

5. վարչական վարույթների իրականացման միջին տևողությունը աճել է 120%-ով (10 օրից դարձել է 22 օր),

6. գերակշռում են կին դիմումատուները՝ 70.5%,

7. ըստ ստացված դիմում-բողոքների՝ վերահսկողական գործառույթների տոկոսային թիվը (34.6%) նախորդ կիսամյակի համեմատ աճել է (2021թ. 2-րդ կիսամյակ՝ 32%, 2022թ. 1-ին կիսամյակ՝ 26%),

8. տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններին և անարդյունավետ աշխատանքին վերաբերող հարցը շարունակում է մնալ դիմումներում առավել շատ բարձրացված հարցը,

9. դիմում-բողոքներից 9-ում (20%) բարձրացված հարցերը դուրս են եղել ԿՏՄ լիազորությունների շրջանակից, ինչը վկայում է այն մասին, որ քաղաքացիները բավարար չափով ծանոթ չեն ԿՏՄ լիազորությունների շրջանակին:

Ելնելով վերլուծության արդյունքներից առաջարկում ենք՝

1. առաջարկել ուսումնական հաստատությունների լիազոր մարմիններին՝ հանձնարարել իրենց ենթակայության ուսումնական հաստատություններին՝ բացառել կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումները՝ ապահովելով կրթական գործընթացի բնականոն կազմակերպում և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ,

2. 2022 թվականին ԿՏՄ-ի կողմից իրականացվելիք կանխարգելիչ միջոցառումների ընթացքում անդրադառնալ նաև ԿՏՄ լիազորությունների մասին հանրությանը տեղեկացնելու գործառույթին:

ՌԳՍՊՎԳ վարչություն